



ԸՆԴՈՆԵԼՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Թանկագի՛ն բարեկամ

Եթե ձգտում եք, որ Ձեր զավակը ստանա իրական բարձրակարգ կրթություն, և նա, ակադեմիական գիտելիքներից, անհրաժեշտ կարողություններից և հմտություններից բացի, ձեռք բերի նաև իսկական մտավորականին և քաղաքացուն արժանի որակներ, ապա հրավիրում ենք Հայաստանի Հանրապետությունում միակ՝ Միջազգային բակալավրիատի երեք՝ նախադպրոցական-տարրական, միջին և ավագ տարիքային խմբերի հանրակրթական ծրագրերով հավաստագրված կրթահամալիր «Շիրակացու Ճեմարան»: Ճեմարանի՝ միջազգային ամենաբարձր չափանիշներով վերապատրաստված աշխատակիցները կկազմակերպեն Ձեր զավակի կրթությունը.

- մանկակրթարանում՝

3-5 տարեկաններ՝ կրտսեր, միջին և ավագ նախադպրոցական տարիքային խմբերում, Ընդունելությունը շուրջտարյա, դիմումներն ընդունվում են սկսած մայիսի 1-ից՝ մանկակրթարանի շենքում:

- Ճեմարանի 8-րդ և 10-րդ դասարանների պետական համաֆինանսավորմամբ տեղերում՝ ընթացիկ տարում 7-րդ և 9-րդ դասարաններն ավարտած սովորողներ, մրցութային ընտրությամբ: Փաստաթղթերն ընդունվում են հունիսի 1-ից մինչև 18-ը, միջին դպրոցի մասնաշենքում՝ ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից)՝ ժամը 9³⁰-ից մինչև 16³⁰ (դիմորդների ծնողներին խնդրում ենք ներկայանալ անձնագրերով):

Քննությունները՝ հունիսի 19-ից 29-ը:

- կրտսեր (տարրական), միջին և ավագ դպրոցների վճարովի տեղերում՝

թափուր տեղերի անկայության դեպքում՝ մրցութային ընտրությամբ:

Մինչև հունիսի 18-ը դիմողների համար քննությունները կանցկացվեն հունիսի 19-ից 29-ը,

Առաջին կիսամյակի ընթացքում դիմողների համար՝ փետրվար ամսվա առաջին տասնօրյակում:

Ճեմարանում իրականացվում է «Շնորհալի երեխաների բացահայտման, նրանց կրթության կազմակերպման և օժտվածության խնդիրների հետազոտման» հեղինակային կրթական ծրագիրը, որն ինտեգրում է ՀՀ պետական և Միջազգային բակալավրիատի (ՄԲ)՝ տարիքային համապատասխան խմբերի համար մշակված ծրագրերը: Ավագ դպրոցում՝ ՄԲ համաշխարհային գրասենյակի կողմից հավաստագրված և ՀՀ կառավարության կողմից արտոնված՝ ՄԲ դիպլոմային ծրագրով (IB DP) կրթությունն իրականացվում է անգլերեն լեզվով:

Առանձնահատուկ ընդունակություններ դրսևորած, այդ թվում՝ հանրապետական օլիմպիադաներում 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի մրցանակներ շահած սովորողները պետական համաֆինանսավորմամբ տեղերում ընդունվում են ողջ տարվա ընթացքում՝ առանց ընդունելության քննությունների, հարցազրույցի հիման վրա:

Բոլոր սովորողների տեղափոխումը կատարվում է հատուկ տրանսպորտային միջոցներով:

Ընդունելության կանոնները հրապարակված են www.shirakatsy.am և www.armedu.am ինտերնետային կայքերում:

Հասցեներ՝ **Կրտսեր դպրոց՝** Նոր Նորքի 5-րդ զանգված, Գալշոյան փող., 15
Միջին և ավագ դպրոցներ՝ Նոր Նորքի 5-րդ զանգված, Արտեմ Միկոյան փող. 35
Մանկակրթարան՝ Կոտայքի մարզ, Ջրվեժ, 10-րդ փողոց, 3 (ճեմարանի
գլխավոր մասնաշենքի անմիջական հարևանությամբ):
Զանգահարել՝ 64-01-02, 64-07-87, 64-07-89, 64-57-05, 66-82-81(կրտսեր դպրոց),
011-64-01-02 (մանկակրթարան) հեռախոսահամարներին:
Էլ. հասցե՝ info@shirakatsy.am Ինտ. կայք՝ www.shirakatsy.am

2010 թվից ճեմարանը «Ռաունդ Սքվեր» (Round Square) միջազգային դպրոցների
համաշխարհային ասոցիացիայի լիիրավ անդամ է:

2008 թվից ճեմարանը՝ ԱՊՀ երկրների, իսկ 2012 թվից Մերձավոր Արևելքի երկրների
Միջազգային բակալավրիատի դպրոցների ասոցիացիաների անդամ է:

2010 թվին «Մայքրոսոֆթ» ընկերության համաշխարհային գրասենյակի կողմից ճեմարանը
ճանաչվել է աշխարհի ամենաառաջավոր նորարար 56 դպրոցներից մեկը:

